

Որակի հոչակագիր Օգտակար հանածոների  
հանքարդյունաբերություն

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Օգտակար հանածոների հանքարդյունաբերություն
0.2	Ոլորտը	Շրջակա միջավայր
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բնապահպանության վիճակագրության բաժին Բաժնի պետ Աննա Հակոբյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 524 620, Էլ. փոստ՝ <a href="mailto:eco@armstat.am">eco@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	Հիմնական նպատակն է տրամադրել տարեկան տեղեկատվություն օգտակար հանածոների արդյունահանման վերաբերյալ: Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 80-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:  Օգտակար հանածոների արդյունահանման մասին տեղեկատվությունը կիրառվում է բնապահպանության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից տարեկան պարբերականությամբ հավաքվող տեղեկություններն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես

	լիազորությունը	նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	Հաշվետվությունը կազմում են պինդ օգտակար հանաձոների արդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունները (ներառյալ առանձնացված ստորաբաժանումները): Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված աշխատանքները չավարտելու դեպքում հաշվետվություններում բերվում են փաստացի կատարված աշխատանքները՝ նշելով դրանց ընթացքի մեջ գտնվելը:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><b>Հիմնական հասկացություններ</b></p> <p>Օգտակար հանաձոների արդյունահանման մեջ ներառվում են.</p> <p>ա) մարված պաշարների քանակը;</p> <p>բ) այն հաշվեկշռային պաշարների քանակները, որոնք հանվել են ընդերքից /ստորգետնյա աշխատանքների ժամանակ/ կամ հանքավայրերից /վերգետնյա աշխատանքների ժամանակ/: Ընդ որում այստեղ հաշվի չեն առնվում այն պահանջարկ չունեցող օգտակար հանաձոները, որոնք ընդգրկված չեն եղել հաշվեկշռային պաշարներում: Օգտակար հանաձոների արդյունահանման հաշվառումը, որպես կանոն, իրականացվում է ըստ հանքաքարի չոր կշռի: Բոքսիտների, սիլիկատային, նիկելային, երկաթի, մանգանի հանքերի, ինչպես նաև բնական տեսքով օգտագործվող օգտակար հանաձոների /կրի, կավի, հանքային աղերի և այլնի/ համար արդյունահանման հաշվառումը տարվում է պաշարների հաշվարկման ժամանակ ընդունված խոնավությամբ;</p> <p>գ) կորուստներն օգտակար հանաձոների հաշվեկշռային պաշարների այն քանակներն են, որոնք հանքամշակման ժամանակ ընդերքից դուրս չեն հանվում: Կորուստներ են համարվում նաև այն պաշարները, որոնք արդյունահանվել և ուղարկվել են հանքամշակումից գոյացած հողաշեղջ՝ պահեստավորման, թափվել են բեռնման և տեղափոխման ժամանակ;</p> <p>դ) անօգուտ ապարների և պահանջվող նորմային</p>

		<p>չհամապատասխանող հանքաքարերի փաստացի քանակները, դրանք արդյունահանվել են օգտակար հանածոների հետ և ընդգրկված չեն պաշարների հաշվարկներում:</p> <p>Ճյուղային ընդգրկունություն</p> <p>Վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2) տեսակները:</p> <p><b>Աշխարհագրական ընդգրկունություն</b></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p> <p><b>Հրապարակման խմբավորումներ</b></p> <p>Օգտակար հանածոների արդյունահանման տվյալները հրապարակվում են ըստ օգտակար հանածոների տեսակների, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների խմբավորման:</p>
<b>2. Ժամանակայնություն</b>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տարեկան ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 2-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
<b>3 .Ճշգրտություն</b>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Ցուցանիշների հաշվարկման հիմքում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մշտադիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպություններն են: Տնտեսավարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից պետական վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:</p>

3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուր առկա չէ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից նախորդ տարվա վերաբերյալ ներկայացված տվյալների ճշգրտությունն իրականացվում է նախորդ տարի տվյալ ժամանակաշրջանի համար ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
<b>4 .Համադրելիություն</b>		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ. ցուցանիշները ներկայացվել են Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ. ցուցանիշները ներկայացվում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված ԵՄ վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE հիման վրա): 2010թ. կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ Առկա չէ	Համադրելիություն այլ վիճակագրության հետ առկա չէ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
<b>5 .Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	<p><b>Հրապարակումներ</b>  <b>Ամսական հրապարակումներ</b>  «Հայաստանի Հանրապետության սոցիալ- տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն):</p> <p><b>Տարեկան հրապարակումներ</b>  «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):  «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):  «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տարեկան ժողովածու, (հայերեն և անգլերեն):</p> <p><b>Տվյալների բազաներ</b></p>

		<a href="http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a>  <b>Ինտերնետային հասցե</b> Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. <a href="https://www.armstat.am/am/?nid=82">https://www.armstat.am/am/?nid=82</a>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են՝ Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար. ա/ պետական ռեգիստրում գրանցման համարը, բ/ նույնականացման /իդենտիֆիկացիոն/ կոդը, գ/ լրիվ անվանումը, դ/ գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն, ե/ գործունեության հիմնական տեսակը:
5.3	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373:</a>
5.4		Արդյունահանման ժամանակ օգտակար հանածոների կորզման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019թ. դեկտեմբերի 27-ի «Հաշվետվություն օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» Ձև 70-տա (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 48-Ա որոշմամբ հաստատված հավելված 1-ում և հավելված 2-ում:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: